ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Նարինե Վյաչեսլավի Ասրյանի «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հայցորդ Նարինե Վյաչեսլավի Ասրյանի կողմից քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» վերտառությամբ ատենախոսության շրջանակներում ընտրված թեմատիկ ուղղվածությունը, այն է՝ վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխկապակցվածության ուսումնասիրությունը, կարևոր է և արդիական ինչպես տեսական-ակադեմիական, այնպես էլ կիրառական հարթություններում: Ավելին, խնդրո առարկա հանդիսացող երկու հասկացությունների փոխազդեցության հարցը գլոբալ համատեքստում, մասնավորապես, ՏՀԶԿ-ի, Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի օրակարգերում, լայն քննարկման առարկա է:

Աշխատանքի կիրառական արժեքը էլ ավելի է մեծանում՝ պայմանավորված հետխորհրդային երկրների և նաև ՀՀ դեպքային ուսումնասիրության քննարկման հանգամանքով. հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ վերաբաշխման քաղաքականության և կառավարման արդյունավետության միջև առկա է հստակ ընդգծված փոխկապակցվածություն: Մինչ մի շարք երկրներում հաջողվել է ձևավորել համեմատաբար կայուն համակարգեր՝ հիմնված պետական պատասխանատվության բարձր մակարդակի և ինստիտուցիոնալ կառավարման արդյունավետ մեխանիզմների վրա, մյուսներում շարունակում են պահպանվել համակարգային խնդիրներ, որոնք պայմանավորված են կառավարման ինստիտուտների թուլությամբ, թափանցիկության ցածր աստիճանով և քաղաքական անկայունությամբ:

Հեղինակը փաստում է, որ ՀՀ-ի համար այս խնդիրը առանձնահատուկ արդիականություն և նշանակություն ունի: Խորհրդային համակարգի փլուզումից հետո նորանկախ պետությունները հայտնվեցին բարդ անցումային շրջափուլի մեջ, երբ պլանային տնտեսությունից շուկայական հարաբերությունների անցումն ու քաղաքական ինստիտուտների վերակառուցումը ուղեկցվեցին կառավարման

ճգնաժամերով, սոցիալական անհավասարության խորացմամբ և պետական կառավարման արդյունավետության նվազմամբ: Այդ պայմաններում վերաբաշխիչ քաղաքականությունը ձեռք բերեց երկակի նշանակություն՝ մի կողմից հանդես գալով որպես սոցիալական արդարության ապահովման միջոց, մյուս կողմից՝ որպես պետական լեգիտիմության և հանրային վստահության ամրապնդման կարևոր գործիք:

Հեղինակն իր հետազոտության հիմքում է դնում այն մոտեցումը, որ կառավարման արդյունավետությունն ու վերաբաշխիչ քաղաքականությունը փոխկապակցված և փոխլրացնող երևույթներ են: Այն պայմաններում, երբ կառավարման համակարգը բնութագրվում է զարգացած ինստիտուտներով, բարձր թափանցիկությամբ և հաշվետվողականությամբ, վերաբաշխիչ մեխանիզմները գործում են ավելի հասցեական և սոցիալապես հավասարակշռված՝ նպաստելով սոցիալական անհավասարությունների կրճատմանը: Ընդհակառակը՝ կառավարման ինստիտուցիոնալ թուլության դեպքում նույն գործիքները հաճախ դառնում են անարդյունավետ՝ հանգեցնելով ռեսուրսների անարդյունավետ բաշխման, կոռուպցիոն ռիսկերի սրմանը և հանրային վստահության նվազմանը:

Հեղինակն իր հետազոտության հիմքում դրել է ամուր մեթոդաբանական հենք՝ ինտեգրված մոտեցմամբ օգտագործելով ինչպես որակական, այնպես էլ քանակական հետազոտության մեթոդներ. մասնավորապես, ուսումնասիրության ընթացքում իրականացվել է թեմային առնչվող գիտական աղբյուրների համակողմանի վերլուծություն՝ խնդրի տեսական դրույթների, տարբեր գիտական մոտեցումների և դրանց փոխլրացնող բնույթի բացահայտման նպատակով:

Հետազոտության կիրառական հատվածն ամփոփում է ՏՀԶԿ երկրների, հետխորհրդային երկրների և նաև ՀՀ փորձառության ուսումնասիրության համատեքստում, ինչը թույլ է տվել վերհանել քննարկվող պետությունների կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը վերաբաշխման գործընթացների վրա: Աշխատանքում կիրառվել են նաև վիճակագրական վերլուծության մեթոդներ՝(Ջինիի համաթիվ, Գլոբալ կառավարման համաթիվ, Պիրսոնի հարաբերակցային գործակից)՝ նպատակ ունենալով բացահայտելու քննարկվող հասկացությունների միջև եղած իրական հարաբերակցային առանձնահատկությունները:

Ատենախոսությունն առանձնանում է հստակ ձևավորված և ներքուստ սահուն և փոխկապակցված տրամաբանական կառուցվածքով, որը համադրում է ընտրված թեմայի տեսական հիմնադրույթներն ու կատարված կիրառական վերլուծությունները:

Աշխատանքի առաջին՝ **«Պետության վերաբաշխիչ քաղաքականությունը հանրային քաղաքականության մշակման և իրականացման համատեքստում»**

վերտառությամբ գլուխը, նվիրված է պետության վերաբաշխիչ քաղաքականության տեսական և հայեցակարգային հիմքերի ուսումնասիրմանը՝ այն դիտարկելով հանրային քաղաքականության ձևավորման և իրագործման հարթություններում: Գլխում բացահայտվում է վերաբաշխիչ քաղաքականության նշանակությունը կայուն զարգացման, սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության ապահովման գործընթացներում՝ ընդգծելով պետական կառավարման արդյունավետության վճռորոշ դերը: Միաժամանակ ներկայացվում են հանրային քաղաքականության տիպաբանությանը և վերաբաշխման սոցիալ-տնտեսական մեխանիզմներին առնչվող հիմնական տեսական մոտեցումները, ինչպես նաև դրանց կիրառելիության սահմանափակումները:

Երկրորդ գլուխը՝ **«Վերաբաշխիչ քաղաքականության իրականացման միջազգային փորձը և արդի միտումները (ՏՀԶԿ երկրների օրինակով)»**, նվիրված է ՏՀԶԿ երկրների փորձի և ժամանակակից միտումների վերլուծությանը՝ կենտրոնանալով եկամուտների անհավասարության նվազեցման, սոցիալական արդարության և աղքատության կրճատման հիմնահարցերի վրա: Վերլուծության արդյունքում ցույց է տրվում, որ վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալ-տնտեսական գործոններով, այլև հասարակական ընկալումներով, քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրով, ինչպես նաև կառավարման որակով: Եզրահանգվում է, որ ՏՀԶԿ երկրներում արդյունավետ կառավարումն ու եկամուտների հավասարակշռված վերաբաշխումը հանդես են գալիս որպես կայուն սոցիալ-տնտեսական զարգացման փոխկապակցված և փոխլրացնող գործոններ:

Աշխատանքի երրորդ՝ **«Վերաբաշխիչ քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատման հիմքերի կայացումը և զարգացումը (հետխորհրդային երկրների օրինակով)»**, գլուխը նվիրված է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխհարաբերությունների ուսումնասիրությանը հետխորհրդային երկրների, մասնավորապես ՀՀ օրինակով: Գլխում հիմնավորվում է, որ արդյունավետ կառավարման ձևավորումը հետխորհրդային տարածքում պայմանավորված է ինստիտուցիոնալ զարգացման ուղիներով, քաղաքական կամքի առկայությամբ և տեղական առանձնահատկություններին համահունչ բարեփոխումների իրականացմամբ, ինչը ուղղակի ազդեցություն է ունենում վերաբաշխիչ քաղաքականության արդյունքայնության վրա: Եզրակացվում է, որ ինստիտուցիոնալապես կայացած կառավարման համակարգը սոցիալական արդարության ապահովման, հանրային վստահության ամրապնդման և սոցիալ-տնտեսական երկարաժամկետ կայունության կարևորագույն նախապայման է:

Աշխատանքն ունի բավականին կուռ գիտական մշակվածություն.դիտարկվել են քննարկվող հասկացությունների տեսահայեցակարգային հենքեր, վերլուծվել տարբեր հեղինակների մոտեցումներ, ինչպես նաև փորձ է արվել համատեղել և համադրել վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության վերաբերյալ տնտեսական և քաղաքական գիտություններում գոյություն ունեցող հիմնադրույթներ:

Աշխատանքի շրջանակում իրականացվել է օգտագործված աղբյուրների համընդգրկուն ուսումնասիրություն՝ առանձնակի ուշադրություն դարձնելով օտարալեզու գիտական աշխատություններին, հայաստանյան և միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայք-էջերում ներկայացված քանակական տվյալներին, ինչպես նաև թեմային առնչվող հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերին:

Աշխատանքի «Հավելվածներ» բաժնում աղյուսակների, գծապատկերների և բանաձևային հաշվարկների միջոցով մանրամասն ներկայացված են հետազոտության ընթացքում կիրառված բոլոր քանակական տվյալները, որոնք փաստում են իրականացված վերլուծությունների արդյունքները և հիմնավորում են կատարված եզրահանգումները:

Աշխատանքի շրջանակում իրականացված համապարփակ վերլուծությունը հեղինակին թույլ է տվել տալ մի շարք արժեքավոր առաջարկություններ, մասնավորապես՝ Հայաստանում ձևավորել երկարաժամկետ և համապարփակ վերաբաշխիչ քաղաքականություն՝ համադրելով հարկային, բյուջետային և սոցիալական ուղղություններն ու ապահովելով ռեսուրսների օգտագործման կառավարելի և թափանցիկ կառուցակարգերի առկայություն: Կարևոր է նաև զարգացնել ճկուն ռազմավարություններ, որոնք կհարմարվեն տնտեսական փոփոխություններին և արտաքին շոկերին, բարելավել հարկաբյուջետային համակարգը, կիրառել արդյունքահեն բյուջետավորում և բարելավել հարկային արդարությունն ու վարչարարությունը: Ըստ հեղինակի, այս առաջարկների իրագործումը կարող է նպաստել ՀՀ-ում ներառական տնտեսական աճի, սոցիալական համերաշխության և պետական կառավարման համակարգի որակական վերափոխմանը՝ դիտարկելով արդյունավետ կառավարումն ու արդար վերաբաշխումը որպես փոխկապակցված և փոխլրացնող գործընթացներ:

Այնուհանդերձ, հարկ ենք համարում առանձնացնել մի շարք դիտարկումներ, մասնավորապես՝

1. Աշխատանքում հեղինակը փորձելով կապակցել վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման համակարգերի արդյունավետության կատեգորիաները՝ վերջիններս օպերացիոնալացրել է համապատասխանաբար Ջինիի ինդեքսի և Գլոբալ կառավարման համաթվի տեսքով՝ բանաձևային

հաշվարկներով դուրս բերելով և ապացուցելով վերջիններիս միջև եղած հարաբերակցային կապը: Սակայն հարկ ենք համարում նշել, որ Ջինիի համաթիվը մատնանշում է հասարակության սոցիալական բևեռացվածության մակարդակը, իսկ եկամուտների վերաբաշխման մասով որոշ դեպքերում պատշաճ ձևով ցույց չի տալիս վերաբաշխման անհամաչափության խորքային պատճառները: Ցանկալի կլիներ աշխատանքում բացի Ջինիի համաթվի հետ հարաբերակցելուց, տեսնել կառավարման արդյունավետության ցուցիչների և այլ համաթվերի հարաբերակցային կապերի ուսումնասիրություն, ինչը կարող էր էլ առավել հիմնավոր ձևով մատնանշել ուսումնասիրվող երկու հասկացությունների միջև եղած անհերքելի կապը:

2. Հեղինակն աշխատանքում Համաշխարհային բանկի կողմից ներկայացված կառավարման արդյունավետության վեց ցուցիչներից (քաղաքական կայունություն, ձայնի լսելիություն և հաշվետվողականություն, կառավարության արդյունավետություն, կարգավորման որակ, օրենքի գերակայություն, կոռուպցիայի վերահսկում) Ջինիի համաթվի հետ է կապակցել միայն երկուսը՝ կառավարման արդյունավետությունը (Government Effectiveness) և կարգավորման որակը (Regulatory Quality): Թեև աշխատանքում հեղինակն անդրադառնում է սոցիալական արդարության և անհավասարության ընկալումների, ինչպես նաև կոռուպցիայի պրոբլեմատիկային, այնուամենայնիվ, չի մատնանշվում, թե ինչպես են, օրինակ, կոռումպացվածության կամ քաղաքական անկայունության բարձր ցուցանիշներն ազդում ռեսուրսների վերաբաշխման արդյունավետության վրա:

3. Աշխատանքում անդրադառնալով սոցիալական արդարության և անհավասարության հասարակական ընկալումների խնդիրներին՝ հեղինակն վերլուծել է այն նախադրյալները, որոնք առաջացնում են պահանջ վերաբաշխման նկատմամբ՝ հիմք ընդունելով ՏՀԶԿ երկրներում իրականացված հարցումների արդյունքները, ինչպես նաև ուսումնասիրելով օրինակ, հանրային վստահության խնդիրը կամ սոցիալական մոբիլությունը, անդրադառնալով «միջին ընտրողի» և «անտոմս ուղևորի» կատեգորիաներին և այդ ամենն արևմտյան իրողությունների, մասնավորապես, եվրոպական և ամերիկյան հասարակությունների համատեքստում: Ցանկալի կլիներ աշխատանքում տեսնել զուգահեռներ հետխորհրդային իրողությունների հետ, մասնավորապես, քննարկված պրոբլեմատիկան ուսումնասիրվեր նաև առավելապես Հայաստանի համար՝ վերաբաշխման նկատմամբ պահանջի տարբերիչ գծերը տարանջատելու նպատակով:

4. Ուսումնասիրելով վերաբաշխիչ քաղաքականության իրականացման միտումներն ու առանձնահատկությունները տնտեսապես զարգացած երկրներում և անցկացնելով զուգահեռներ հետխորհրդային երկրների դեպքային

ուսումնասիրության հետ՝ հեղինակը հստակ չի մատնանշում, թե ինչպես կարող է ՏՀԶԿ երկրների փորձը փոխառելի լինել մեզ համար, մասնավորապես՝ ինչպես կարող ենք ներդնել և գործարկել վերաբաշխման առավել արդյունավետ կառուցակարգեր:

5. Աշխատանքում վերաբաշխիչ քաղաքականության իրականացման արդյունավետությունը և կապը կառավարման արդյունավետ կառուցակարգերի հետ առավելապես ուսումնասիրված է «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության» համատեքստում, որը մատնանշում է ապագայի պետության տեսլականն ու հեռանկարները մարդակենտրոնության, դինամիկության, պատասխանատվության, կայունության և նորարարության ուղղություններով: Ցանկալի կլիներ տեսնել, թե գործնականում ինչպես են վերջիններս իրականացվում և ինչ ազդեցություն են ունենում ինչպես վերաբաշխման, այնպես էլ կառավարման արդյունավետության ցուցանիշների վրա:

Այս ամենով հանդերձ՝ կարծում ենք, որ մատնանշված դիտողություններն էականորեն չեն անդրադառնում ներկայացված աշխատանքի գիտա-ակադեմիական և կիրառական արժեքի վրա: Հեղինակին հաջողվել է աշխատանքում հասնել իր առջև դրված խնդիրների լուծմանը, ինչպես նաև հրապարակած գիտական հոդվածներում արտացոլել ատենախոսության հիմնական դրույթները:

Վերոնշյալից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Նարինե Վյաչեսլավի Ասրյանի «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների համար նախատեսված պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի քաղաքագիտության
ամբիոնի պրոֆեսոր, ք. գ. դ.՝ Ա. Փ. Ենգոյան

Ա. Փ. Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Վ. Հովհաննիսյան

22.12.2025թ.